№ 33 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 20 **1897** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 20 № 33

ՓՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

„ՄՇԱԿ"

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս-հայկական ընկերութիւն. Հեռագիրներ. Նոր ուսումնասիրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մոսկվայից. Նամակ Բագուից. Նամակ Թէլաւից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Բոլղարիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքիայից—Պոլսից և Վանից։

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Անկեղծ ուրախութեամբ կարդացինք Պետերբուրգի „Лучъ" լրագրի մէջ հետեւեալ լուրը. „Պետերբուրգում նախագծվում է հիմնել ռուս-հայկական ընկերութիւն։ Այդ ընկերութեան նպատակը պիտի լինի՝—ուսումնասիրել հայոց անցեալը և ներկայ կեանքը, պաշտպանել հայերին նրանց դէմ եղող անարդար յարձակումներից, օգնել աղքատ, տաղանդաւոր հայերին, տարածել ռուս ընթերցող հասարակութեան մէջ կարեւոր տեղեկութիւններ հայերի մասին և այլն և այլն։ Ընկերութեան նախաձեռնողներն են մի քանի անձինք, որոնք երկար ժամանակ ապրել են Կովկասում և հնարաւորութիւն են ունեցել աւելի մօտիկ ծանօթանալ հայ ազգի հետ"։

Այդ տողերն արդէն բաւական են մեծաւոր գաղափար տալու համար այն համակրելի հեռուանքների մասին, որոնց կարող է հասնել մի այդպիսի ընկերութիւն, և մեզ մնում է ցանկալ, որ այդ լուրը իրագործվի, և ռուս-հայկական ընկերութիւնը, որքան կարելի է շուտ և որքան կարելի է եռանդուն կերպով հիմք դնի իր գործունէութեան։

Այդ ցանկալի է մանաւանդ այժմ, մանաւանդ ներկայ պայմաններում, երբ խաւարի որդիք, քաղաքական և դրական աֆերիստները ձեռք ձեռքի տուած ձգտում են ռուսաց մեծ ազգի մէջ ատելութիւն սերմանել դէպի փոքրիկ հայ ազգութիւնը, և վերջնականապէս խզել այն կապը, որով շաղկապված է հայոց փոքրիկ, բայց կուլտուրական համայնքը քաղաքակրթութեան կողմնակից ռուս տարրի հետ։

Եւ եթէ պետութեան մայրաքաղաքում հիմնվի մի այդպիսի ընկերութիւն, որի մէջ մտնեն ռուսաց դրականութեան, մտքի նշանաւոր ոյժեր, հասարակական աչքի ընկնող գործողներ, նպատակ դնելով մի կողմից ուսումնասիրել հայ տարրը, իսկ միւս կողմից տարածել ռուսների մէջ ճիշդ տեղեկութիւններ այդ ընդունակ ժողովրդի մասին, այն ժամանակ, մենք համոզված ենք, որ ռուս մտաւորականները, գրականութեան փոխադարձ ատելութիւն քարոզող օրգանների ճիւաղային աղաղակները կը մնան „ձայն բարբառոյ յանապատի", արժանի միայն ատելութեան և արհամարհանքի։

Ռուսաց առաջադէմ, ազգային նախապաշարումներից բարձր կանգնած գրողների և մտաւորականների վրա սրբազան պարտականութիւն կայ դէմ դնել այն ատելութեանը, որ սերմանվում է նոյն պետութեան մէջ ապրող զանազան ազգութիւնների մէջ, և այդ պատճառով նրանց առաջին պարտքն է հիմնել ոչ միայն ռուս-հայկական, այլ և ռուս-լեհական, ռուս-վրացիական ընկերութիւններ, բարձրացնելով մի ընդհանուր դրօշակ, որի վրա գրված պիտի լինեն մեր դարի ամենահամակրելի խօսքերը. „ազգերի համերաշխութիւն"։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

—

Կ. Պոլիս, 18 մարտի։ Կոտորածը և աւերումները թաքստում չարունակվեցին 36 ժամ։ Հայ զոհերի թիւը հաշւում են 400 հոգի։ Բռնութիւններին մասամբ մասնակցում էին և թիւրքաց զօրքերը։ Բ. Դուռը տեղեկացրեց դեսպաններին, որ պատերազմական մինիստրը դիսցիպլինային կարգով արձակեց պաշտօնից զօրքերի հրամանատարին և որ քննիչ յանձնաժողովին իրաւունք է տրված մահվան դատավճիռներ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

I

Կ. Պոլիս, մարտի 8/20-ին

Անցեալները «Մշակի» մէջ հաղորդված էին մի քանի տեղեկութիւններ այն հայ որբերու մասին, որք զրկուած էին յերուսաղէմ։ Այդ նոյն որբերու մասին այս շաբթու Երուսաղէմէն ստացած նամակէն հետեւեալը կը քաղեմ ընթերցող հասարակութեան համար։ «Այստեղ օրէ օր հայ որբերու թիւը կը շատնայ և ինչ որ ամենէն ցաւալին և սրտաճմլիկն է, անոնց ազգային և եկեղեցական ամեն խնամքներէ բոլորովին զուրկ մնալն է. այստեղի եւրոպական կրօնական հաստատութիւնք եղած են պատսպարան հայ մանուկներու, որք զրկուած են ծնողի և ազգականի գուրգուրանքէ և խնամքէ. թէ ինչպէս կը պահուին անոնք, այնչափ հոգ չէ, սակայն խնդիր է, թէ ինչպէս կը դաստիարակուին. հայերէն լեզուով այլ ևս չեն խօսեր անոնք և չեն ուսանիր իրենց մայրենի լեզուն, ոչ պատմութիւնն և ոչ կրօնքն։ Անցեալները հայ վարդապետի մը ձեռք 7—8 կտոր նամակներ տեսայ. «Այստեղի գերմանական դպրոցի մէջ գտնուող որք աղջիկներ տուին, ըսաւ, որպէս զի իրենց ծնողաց և ազգականաց դրկեմ, կարող էք կարդալ»։ Կարդացի մէկ քանին. ինչ սրտայոյզ պարունակութիւն. չը կրցայ արտասուքս բռնել. վարդապետն ըսաւ թէ «բարեկամի մը յանձնարարութեան վերայ այդ որբերէն մին տեսնելու գնացի. բարեբաղդաբար դուրս գտայ զիրենք, զբօսանքի ելած էին. անմիջապէս շրջապատեցին զիս և ձեռքերս համբուրելով սկսան այլ և այլ հարցումներ ընել... ոմանք մինչև իսկ ազգին վիճակէն կը հետաքրքրուէին. անոնցմէ մէկ երկուքը 10—12 տարեկան, շատ յուզեալ կերեւէին և նկատեցի, որ երեսները մէկ կողմն դարձուցած կուլային. սիրտս տակնուվրա եղաւ և իմ ալ աչքերս արտասուք լեցան։—Ո՛հ, միթէ այստեղ հայեր չը կան, չէ՞ որ հոս հայոց մեծ վանք մը կայ, կըսէին, ինչու չեն հարցներ, չեն փնտռեր, ինչու երբեմն-երբեմն մէկը չեն զրկեր զմեզ մխիթարելու (ա՜հ, գառնուկներ, դուք ինչ գիտէք, վանքերու մէջ եղողներն ժամանակ ունեն այդպիսի բաներու վրա մտածելու), մենք այստեղ բան մը չենք սորվեր, ինչ օգուտ է մեզ արաբերէն և գերմաներէն... Ուրիշ փոքրիկ մը ձեռքս կը համբուրէր և մեզի «ժամ» տար կըսեր աղերսարկու դէմքով մը. ալ կարելի չէր դիմանալ, մէկ երկու մխիթարական խօսք ընելով՝ մեկնեցայ»։ Ասոնց նամակներն՝ զորս իրենց ծնողաց և ազգականաց ուղղեր էին, մի և նոյն գանգատները կը պարունակէին։

Բողոքական միսիոնարների օրգան «Աւետարեր» շաբաթաթերթի յունվարի 11-որդ համարում հրատարակած նամակին նայելով, Իզմիրի գերմանական «Ցիագունէ» որբանոցին մէջ ալ եօթանասուն և մէկ հայ որբեր պատսպարուած կան, որոնց թիւը քիչ ատէն 90-ի պիտի հասնի եղեր։ Սակայն ասոնց մասին նամակագիրը, հայ բողոքական երէց պ. Յակոբ Թաշճեան քիչ մը կապահովէ զմեզ գրելով՝ գերմաներէն, թէ անգլիերէն և յունարէն լեզուաց հետ ասոնցմէ լեզուն և պատմութիւնն ալ սկսած են և թէ որբանոցն ունի հայ վարժուհի մը (բողոքական)։ Թէ ինչ ասոիճան ստոյգ են պ. Թաշճեանի այս տեղեկութիւնք, մենք առ այժմ միջոց չունինք քննելու, ժամանակը ամեն բան պիտի յայտնէ. սակայն Իզմիրի հայոց ուշիմ առաջնորդը միթէ իրեն պարաք չը պիտի համարէ այցելել հայ որբերը, քննել և տեղեկանալ անոնց վիճակին և տնօրինել ինչ որ պէտքն է և ինչ որ կարելի է։

Վերոգրեալ տեղեկութիւններէն կերևի որ Եւրոպայի կրօնական զանազան միաբանութիւնք և հաստատութիւնք իրարու հետ կը մրցին ատի և անտի, Կ. Պոլսէն և գաւառներէն հայ որբեր ժողովել և իրենց անմիջական խնամոց ներքև դաստիարակել։ Թէ ինչ կերպով և ինչ պայմաններով ձեռք կը բերեն այդ որբերը, ցարդ որոշ բան մը չը լսուեցաւ. շատերը կըսեն թէ ծնողքներ կամ ազգականներ զիր տուած են երբէք չը միջամտել, մինչև որ տղաք կրթուին, դասաւարակուին և ի չափ հասնելով ինքնին որոշեն իրենց վիճակը. ոմանք ալ կըսեն թէ քանի մը տարուան պայմանով տուած են, յորմէ յետոյ պիտի յանձնուին իրենց ազգականաց։ Ինչ որ ալ լինի, ըստ իս Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքարանի անխուսափելի պարտաւորութիւն է առանց ժամանակ կորսնցնելու ձեռք առնուլ հայ որբերու խնդիրն, բանակցութեան մտնել այն հաստատութեանց հետ, յորս կը գտնուին հայ որբեր և անոնց ազգային ազգի համար ապահովել, իսկ այդ կարգի վտանգներու յառաջն միանգամ ընդ միշտ առնելու համար շրջաբերականներով զգուշութիւն և պատուէր տալ ամենուն, ի Կ. Պոլիս և ի գաւառս և ազգային շրջանակի մէջ որբերու խնամակալութիւն մը կազմելով—որբանոցներ բանալ տալ, որոց աւելի նպատակայարմար կը լինին մեր վանքերէն շատերը, ինչպէս արդէն սկսած է ըլլալ Վանայ Կարմրաւորի վանքը։

Իսկ Երուսաղէմի հայոց պատրիարքէն և միաբանութիւնէն ալ կը սպասենք որ իրենց շուրջը գտնուած որբերուն մասին զէթ Կ. Պոլսոյ պատրիարքարանին ներկայացնէն և հարկ եղածը ընել տալու աշխատին։

Ա.

II

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, փետրվարի 24-ին

Ներկայ հանգամանաց մէջ կարելի չէր անշուշտ, որ տեղւոյս կրթական վիճակը նախանձելի դրութեան մը մէջ լինէր։ Անցեալ տարի այս միջոցներ 14 վարժարան ունէինք, որոց բոլորին մէջ կուսանէին 3000-ի չափ մանուկներ երկու սեռէ։ Այժմ բաց են միայն բողոքականաց երկու վարժարաններ (արական և իգական), Սանդիտեան օրիորդական վարժարան, Նորաշէնու ծխական, և որբանոցի անհատական վարժարաններ։ Արարոց դպրոցն ալ անցեալ շաբթուն բացվեցաւ։ Ներկայ վարժարաններու մէջ երկու սեռի ուսանողաց թիւ հազիւ հազար կը լինի։ Ուսուցիչ ալ չունինք։ Անցեալ տարի այս օրեր Վանի ուսուցչաց և ուսուցչուհեաց թիւ 80-ի չափ էր, իսկ այժմ հազիւ 35, բոլոր կամ սպանված են, կամ մեռած, կամ Վանէն հեռացած։ Իդէպ, յիշելու է որ «բարեխնամ» կառավարութիւնն ալ օսմանեան լեզուի բարբառ ուսուցման համար իւրաքանչիւր դպրոցին յատկացուցած է մէկ-մէկ թիւրք ուսուցիչ, որոց ամսական ինք կը վճարէ, մինչև իսկ գոց եղող դպրոցներու համար ուսուցիչ կայ յատկացուած, որոց ամսական կը վճարուի կանոնաւորապէս։ Բողոքականաց դպրոցներու աշակերտներէն 200-ն գիւղացի և քաղաքացի գիշերօթիկ որբեր են (10 հազար կը հաշուեն մեր վիլայէթի որբերուն թիւը)։

Որբանոցի վարժարանի 200 ուսանողներէն 120 ձրի են. հիանալի է արդարև այս դպրոցի հիմնադիր տեսչի (Համբարձումի Երամեանի) կրօնը, գործունէութիւնը և անձնուիրութիւնը։ Երկրի այս ասոիճան անկեալ դրութեան մէջ, այնքան ճգնամտեր կրնայ յատոյ, տակաւին յարատեւել և գործ նոյն արդիւնաւորութեամբ չարունակել և դա միմիայն իր անհատական ճգանց շնորհիւ, իրաւ որ շատ մխիթարական մի երեւոյթ է։ Նա չունենալով ոչ մի եկամտի աղբիւր, բայց եթէ միայն 80-ի չափ թոչակաւոր աշակերտաց վճարը և ռուսահայ բարերարի մը՝ Վանայ աղքատներու անմիջական պէտքերուն կտակած 1000 բուբլի դումարին տոկոսը, յաջողեցաւ դարձեալ իր պիւդճէն կանոնաւորել և անցեալ օգոստոսէն իսկ բանալ իր դպրոց, թեակոխելով անոր գոյութեան 19-րդ շրջանը և տալ անոր առաջնակարգ դիրք։ Ցաւալի է միայն մտածել, թէ մեր երկրի տնտեսական վիճակ, եթէ տակաւին երկար ժամանակ այս դրութեան մէջ մնայ, այսպիսի հաստատութիւն մը ալ չը պիտի կարենայ իր գոյութիւնը պահել։ Ինչեր կորսուցինք և ո՛ գիտէ դեռ ինչեր կորսնցնելու ենք։

Մ—դ

կարդալ, առանց բողոքի։ Դեսպանները մի յանձնաժողով ուղարկեցին Թոքատ։ Արքախան չըրջանի զանազան կէտերում բռնութիւնները նոյնպէս խոշոր չափեր ունէին և չարունակվեցին մի քանի օր։

Լ ո ն դ ո ն, 18 մարտի։ Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը հրատարակեց իրադէ, որով յայտնում է, թէ Թոքատի կոտորածների գործի հետ կապ ունեցող բոլոր դատավճիռները ինքն՝ սուլթանը պէտք է կարդայ, և ոչ թէ քննիչ յանձնաժողովը։

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Լ ո ն դ ո ն ի մեր թղթակիցը հաղորդեց արդէն, որ անգլիական պատկերազարդ «The Daily Graphic» լրագրի մէջ հրատարակվել են Փոքր-Ասիայից ստացված մի շարք նամակներ, որոնց մէջ ճանապարհորդ թղթակիցը, իբրև ականատես, նկարագրում է անցեալ տարվայ թըշուառութիւնները։ Իր նամակների մէջ հեղինակը ծանօթացնում է ընթերցողին երկրի և նրա բնակիչների հետ, պատմում է վերջին տասն—քսան տարվայ միջոցին պատահած նշանաւոր քաղաքական դէպքերը և տալիս է մի քանի տեղերի և անցքերի լուսանկարչական պատկերները։ Այդպիսի պատկերներից մէկն է, օրինակ, Զէյթունի պատկերը։ Հետաքրքիր կերպով պատմված են Զէյթունի հին և նոր ապստամբութիւնները և Եւրոպայի բռնած դիրքը զէյթունցիների վերաբերութեամբ թէ անցեալում և թէ ներկայում։ Երկրի և անցքերի ուսումնասիրութիւնը թողել է ճանապարհորդի վրա այն տպաւորութիւնը, որ թիւրքական պաշտօնական զեկուցումները բոլորովին չինծու են և խարդախ։ Ստոյգ տեղեկութիւնների վրա հիմնված՝ հեղինակը կտրական ոճով յայտնում է, թէ անկարգութիւնների սկզբնապատճառները ամեն տեղ եղել են թիւրքերը և թէ դեռ անկարգութիւնների տեղի ունենալուց առաջ՝ կազմվում էին լինելիք անցքի մասին բոլորովին ուրիշ տեսակ արձանագրութիւններ։ Այդ նախօրօք կազմված պաշտօնական արձանագրութիւնները ներկայացնում էին գործը այնպէս, որ իբր թէ ընդհարումների պատճառը կամ մի հայ յեղափոխական է, որ սպանել է մի մահմեդականի, կամ մի խումբ հայեր են, որոնք յարձակվել են թիւրքերի վրա՝ մզկիթից դուրս գալու ժամանակ։ Ճշմարտութիւնը երևան հանելու գործը աւելի ևս խճճելու և դժուարացնելու համար թիւրքերը այդ արձանագրութիւնները ստորագրել էին տալիս նոյն իսկ այն հայերին, որոնք պէտք է յետոյ ենթարկվէին սարսափներին։ «Եւրոպայում, ասում է թղթակիցը, այն կարծիքն է տիրում, որ Փոքր-Ասիայում ներկայումս տեղի ունի ցեղական մի պայքար. իսկ մենք համոզվեցինք, որ այդ բոլորը նախօրօք մտածված և ծրագրված մի կոտորած է։ Հայերը, իբրև ոչխարներ, խնարհ կերպով գնում էին իրանց պարանոցները սրի տակ։ Օտարազգիները, որոնք ականատես են եղել այդ տեսարաններին, զարմանք են յայտնում հայերի խորին կերպով ընկճված այդ դրութեան մասին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Մարտի 13-ին

Ուսումնական տարվայ ամեն մի կիսամեակի վերջերում՝ ուսանողութեան աղքատ մասը, թըւով մի քանի հարիւր հոգի, ընկնում է մատանջութեան և վերին աստիճանի անհանգստութեան մէջ։ Պատճառը ուսման վարձը չը տալու համար համալսարանից արտաքսվելու վախն է։ Եւ ինչպէս չանհանգստանալ, երբ զրկվում ես երկար տարիների աշխատանքով ձեռք բերածից, երբ փչրվում է ամբողջ ապագան՝ վայրիացած մտքերի հետ...

Այս օրերս ահա ըստ սովորականին համալսարանի նախասրահներում դարձեալ կախ տուին այդ անբաղդների ազգանունների ցուցակը։ Ինչ ասել կուզէ, որ դրանց թւում միշտ լինում են և հայեր, թէև հայ ուսանողութիւնը միշտ կարողացել է հոգալ իր չքաւոր անդամների կարիքները. սակայն այս տարի նախ հայերից այդ վիճակին ենթարկվողների թիւը անհամեմատ շատ է. միւս կողմից ուսանողական դանձարանը շատ աղքատ դրութեան մէջ է, ուստի մօտ 20 հայ ուսանողների սպառնում է բարձր կրթութիւնից զրկվելու մեծ վտանգը, եթէ շուտով օգնութիւն չը հասցնվի նրանց։

Այս տխուր երևոյթի գլխաւոր պատճառը հանդիսանում են, անշուշտ մեր նախկին ընկերները։ Մոսկվայի հայ ուսանողութեան դանձարանը ունի իր նախկին անդամների վրա 20,000 ռուբլուց աւելի պարտք։ Եթէ այդ պարտները բարեհաճէին վերադարձնել իրանց պարտքերը, նրանց յետնորդները աւելի երջանիկ կը լինէին և չէին ենթարկվի այսպիսի սքանչելի մտածմունքներ յարուցանող վիճակի։ Բայց ինչպէս երևում է, մեր դիպլոմաւոր աղաները ոտքի տակ են տուել ամեն սրբութիւն, մոռացել են կրթված մարդուն յատուկ ամենատարրական պարտականութիւնները, միանգամայն թաղվել են կեանքի ցեխի մէջ, իրանց իդէալ ընտրելով փող դիզելը ու հարստութիւն ձեռք բերելը... Ահա հէնց այս է պատճառը, որ ոչ մի բարոյական հարուած չէ ազդում այդ կոյր եսամոլների վրա։ Այս անգամ մենք կը բաւականանք մեր բոլոր արհամարհանքը, ատելութիւնն ու զզուանքը ուղղելով այդ հաստավոր ինտելիգենտների հասցէին և դառնալով ընդհանրապէս հայ հասարակութեան ու հայ բարեգործներին՝ նրանց ուշադրութիւն ենք հրաւիրում հայ ուսանողների անել դրութեան վրա։ Թող ինքը հասարակութիւնը ամաչեցնէ մեր նախկին ընկերներին, եթէ միայն վերջինները դեռ ևս ընդունակ են ամաչելու. թող նա չը մոռանայ այն այրուբենական ճշմարտութիւնը, որ ամեն մի քաղաքակրթված հասարակութեան բարոյական պարտականութիւններից մէկն էլ ուսանող սերնդին օգնելն է։ Վերջինս միշտ վայելել է հայ հասարակութեան զգացող ու հասկացող մասի սիրալիր օգնութիւնը։ Եւ ահա նա այժմ ևս դիմում է այդ նոյն հասարակութեան, լիայոյս լինելով, որ իր ձայնը արձագանք կը գտնի։ Օգնութիւն, քանի դեռ ուշ չէ։

Ուսանող

ՆԱՄԱԿ ԲԱԳԴԱԴԻՑ

Մարտի 10-ին

Սաարսելոկու սպանութեան գործը

IV

Շարունակում ենք առաջ բերել մի քանի վրկաների ցուցմունքները, այստեղի պոլիցիայի բարքերը պարզելու համար։ Պրիստաւներ՝ Նասիրբէկովի և Միանսարովի ցուցմունքներից յետոյ՝ խօսք է տրվում մեղադրվողներին։ Վերջիններս փորձում են հերքել նրանց վկայութիւնը և մի և նոյն ժամանակ ուղղակի մեղադրանք են ուղղում նրանց հասցէին։

Մաշադի Մահմէդը նկատում է. «Պրիստաւ Միանսարովը ինձ դող է անուանում, մինչև անգամ յայտարարում է, որ իբր թէ ես խոստովանել եմ նրան իմ կատարած գողութիւնը։ Հետաքրքիր է իմանալ—եթէ այդ ճիշդ է, ինչու այդ մասին նա արձանագրութիւն չէ կազմել և ինձ դատի չէ ենթարկել. կը նշանակէ նա զիտմամբ լռել է և ծածկել գողութիւնս, հետևապէս նա ևս մասնակից է այդ գողութեանը, նա էլ բաժին է ստացել...» Նոյն պրիստաւի հասցէին տրտունջ է յայտնում և Ֆատտահը։ Մինթէ պրիստաւը, հարցնում է մեղադրվող Ֆատտահը, —առանց պրօկուրորի թոյլատրութեան իրաւունք ունի բանտարկեալի մօտ գալու։ Միանսարովը գալիս էր բանտը ինձ մօտ, սպառնում, ասելով թէ ինձ կախ կը տան, եթէ ես ցոյց չը տամ, թէ սպանողը Բաքիխանովն է...

Այդ ցուցմունքներ տուեցին վկայ կառապանները և հերթապահ ոստիկանը։ Նախկին ոստիկանական պաշտօնեայ Սուլթանովը յայտնում է, թէ ոչ մի ցուցմունք չէ ուզում տալ, որովհետև վախենում է։ Նա ասում է. «Ես 1887 թուից սկսած՝ ապրում եմ այստեղ, շատ լաւ գիտեմ այստեղի վարք ու բարքը և սովորութիւնները. ես ընտանիքով ծանրաբեռնված մարդ եմ, չեմ ուզում գլուխս վտանգի մէջ դնել...» Այս խորհրդաւոր վկան վերջում խընդրում է պրօկուրորի պաշտպանութիւնը իր կեանքի ապահովութեան համար։

Առանձին ուշադրութիւն է դրաւում խանութպան Հիւսէյն Ղուլի Մաշադիի ցուցմունքը։ Վերջինս քննիչին տուած ցուցմունքները այժմ հերքում է. նա հրապարակօրէն խոստովանվում է, թէ հարկադրված է եղել սուտ խօսելու, որ ազատվի ոստիկանատնից, ուր երեք օր ահ ու սարսափի մէջ պահում են եղել իրան... «Ես ոչ օրին չեմ տեսել փախչելիս, ասում է վկան. եթէ քննիչին ցոյց եմ տուել՝ որպէս թէ ես տեսայ փախչելիս խանութի մօտից Ֆատտահին և Մաշադուն, այդ նրա համար, որ ինձ այդպէս սովորեցրին և հրամայեցին այդպէս ասել։ Սովորցնողն էր պրիստաւ Միանսարովը, որը սպառնում էր բանտարկել, եթէ այդպէս չասեմ։ Միանսարովը խեղոյն և եթ բացատրում է այդ ցուցմունքը, աւելացնելով, թէ նա սուտ է խօսում և հիմա, նոյն իսկ երդումից յետոյ... Միանսարովի այս վերջին կարծիքը մտցնվում է արձանագրութեան մէջ։

Ապա հարց ու փորձից երևում է, որ պրիստաւները ներկայ են եղել քննիչի նախապատրաստական քննութեան ժամանակ։ Պրօկուրորը հարցնում է պրիստաւ Նասիրբէկովին այդ մասին. նա ուրանում է, ցոյց է տալիս, որ ինքը երբէք ներկայ չէ եղել նախատրաստական քննութեան։ Սակայն մեղադրվող Հիւսէյն Ղուլին պատմում է, որ իրան քննիչի մօտ ղրկել են իրանք պրիստաւները և քննութեան ժամանակ էլ ներկայ են եղել՝ մէկը աջ կողմից, միւսը ձախ։ «Եթէ պրիստաւները ներկայ չը լինէին այնտեղ, աւելացնում է վկան, ես քննիչին էլ ճիշդը կասէի, ինչ որ ասում եմ այժմ, հարկադրված չէի լինի սուտ խօսելու»։ Պրօկուրորը հրաւիրում է դատաւորների ուշադրութիւնը այդ հանգամանքի վրա։

Ուրիշ շատ վկաների թւում Սէյիդ Հիւսէյն, որ դատապարտված է իր այլ մեղքերի համար տաժանակիր աշխատանքի, հիմնովին փոխում է քննիչին տուած իր ցուցմունքները։ Նա ցոյց էր տուել, թէ իբր Բաքիխանովը և ուրիշները իրան կաշառել են, նոյն իսկ ատրճանակ են տուել իրան, որ սպանի Սաարսելոկուն. մինչև անգամ նկարագրել է Բաքիխանովի և Սաարսելոկու անների տեղերը և ուրիշ շատ մանրամասնութիւններ. իսկ այժմ այդ բոլորը հերքում է և պնդում, թէ սուտ է ասել. այդ ցուցմունքը տուել է երկու պրիստաւի՝ Նասիրբէկովի և Միանսարովի ցանկութեան համաձայն, որպէս թէ նրանք են սովորեցրել և դրա փոխարէն խոստացել ազատելու իրան բանտից... «Այդ մասին ես յայտնել եմ, աւելացնում է վկան, քննիչին ևս։ Չը գիտեմ ինչու իմ այդ ասածը չէ մտցրվել քննիչի արձանագրութեան մէջ»։ Մեղադրվող Մաշադի Մահմէդ բէկը յայտարարում է. «Պրիստաւ Նասիրբէկովը աշխատում էր, որ ես վկայ դառնամ «մի գործի». նա ասում էր, որ բացի ինձնից վկայութիւն կը տայ և մի ոստիկան։ Ես մերժեցի։ Այն ժամանակ ինձ գըցեցին կարցեր և այնտեղ սաստիկ տանջեցին։ Ես հիւանդացայ... Կանչել տուի ֆելդշեր և բըժիշկ։ Բանտապետը ինձ հաւատացնում էր, թէ եթէ այդպիսի ցուցմունք, ինչպէս Նասիրբէկովն է թելադրում, չանեմ, այն ժամանակ ինձ կախաղան կը բարձրացնեն, իսկ եթէ անեմ, ամեն տեսակ օգնութիւն կանեն ինձ...»

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԹԷԼԱՒԻՑ

Մարտի 11-ին

Մարտի 9-ին, կիրակի երեկոյեան, Թէլաւի մայր-եկեղեցում, երկու սեռի խառն բազմութեան ներկայութեամբ, Աբէլ քահանայ Սուքիասեանց իր քարոզի ժամանակ յիշեց նոյնպէս հայ գաղթականների մասին։ Քարոզիչը, իրան յատուկ ոգևորութեամբ, վառ գոյներով ներկայացնելով ժողովրդին մեր թիւրքահայ եղբայրների սոսկալի դրութիւնը, չեշտեց նոյնպէս այն հանգամանքի վրա, որ մինչև այժմ աշխարհիս ամեն կողմերից ոչ միայն հայերը, այլ մինչև անգամ շատ օտարազգիներ, առանց կրօնի և ազգի խտրութեան, շտապեցին իրանց նպաստներով թեթևացնել հայ գաղթականների թըշուառ վիճակը, բայց միայն Թէլաւի հայ ժողովուրդն էր, որ փակելով իր աչքերը, չէր կամենում նայել իր շուրջը և հետաքրքրվել ամենքի սիրան ու զգացմունքները ցնցող այժմեան ցաւերով։ Քարոզի վերջը տէր-հայրը յայտնեց, որ Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ շուտով հանգանակութիւն պէտք է բացվի թիւրքահայ գաղթականների օգտին և յորդորեց չը խնայել իրանց առատ նուիրատուութիւնը՝ այդպիսի բարի և սուրբ գործի համար։ Այդ նպատակով այսօր, մարտի 11-ին, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան անդամների ժողով կայացաւ։ Ժողովում որոշվեց դիմել պ. դաւառապետին և նրա հաւանութեամբ մի մանաժողով կազմել Թէլաւի հասարակութեան երկու սեռի պատուաւոր ներկայացուցիչներից, հանգանակութիւն սկսելու համար։ Յոյս ունենք, որ մեր քաղաքացիները, թողնելով իրանց սովորական անտարբերութիւնը, գիտակցօրէն և սիրով կաշխատեն՝ օգնութեան հասնել իրանց թշուառ եղբայրներին և քոյրերին՝ նրանց անտանելի ցաւերը և դառն վիճակը թեթևացնելու համար։ «Լաւ է ուշ, քան երբէք»։

Ս. Ճղմաճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, մարտի 1-ին

Յանուն արդարութեան, ինդրենք, թոյլ տուէք մեզ «Մշակ» լրագրի միջոցով բողոքել այն ստայոդ և չարամիտ յարձակումներուն դէմ («Արձագանք» № 9), որոնց յայտնի նպատակը կերևի՝ աղարտել մեր ընկերակից պ. Սապահ-Գիւլեանը։ Մենք երկու տարիէ ի վեր մեզ գործակից ունենալով պ. Սապահ-Գիւլեանը, պարտք կը սեպենք յայտարարել, որ նա իր անձնուէր գործունէութեամբ, բոլորովին հեռի ազգային դատը հարստահարելէ, անուրանալի ծառայութիւններ մատուցած է այդ դատին։ Այդ անարակելի զրպարտութեանց դէմ մեր բողոքը յայտնելու առթիւ, մեր զզուանքը կուղղենք Ագշամ-Զըրաղեանի, այդ դիմակի ներքև պահ-ուիլ կարծող խաւարադէմ ոգիին։

Փարիզու հայ ուսանողաց մասնախմբին գործադիր ժողովոյ անդամք՝

Բժ. Ն. Զարիֆեան, Ս. Մ. Դաւիթպէկեան
Կ. Յ. Բասմաջեան, Յ. Թ. Գայաեան
Ա. Նէդուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հին-Նախիջևան, մարտի 1-ին

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը անցեալ տարվայ դեկտեմբերի 20-ին Աստրախանից, տիկիններ՝ Աննա Սուրաբէկեանի և Աննա Թելեթեանի գրած նամակի և «Մշակի» № 12-ի մէջ հաղորդած տեղեկութեան հիման վրա, պատիւ ունի յայտնելու «Մշակի» միջոցով, որ Աստրախանում բարեգործական նպատակով կայացած ներկայացման արդիւնքից այստեղի գաղթականների համար յատկացրած և Աստրախանի պ. Նահանդապետի միջոցով վարչութեան ուղարկած 200 ռուբլին վարչութիւնս տակաւին չէ ստացել։ Ուստի վարչութիւնը իր պարտքն է համարում յայտնել այդ հանգամանքը ի գիտութիւն նուիրատու պարոնների և տիկիններին։

Նախագահ վարչութեան՝ Ա. Եղիազարեան
Գործավար՝ Ա. Եղիազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր թղթակիցը հաղորդում է մեզ Բաղուից, մարտի 16 ից, հետևեալը. «Մարդասիրական ընկերութեան» խորհուրդը, համաձայն ընդհանուր ժողովի տրամադրութեան, որոշել է, ըստ իր հայեցողութեան, միանուագ նպաստ տալ օգնութեան կարօտ հայ գրողներից՝ Ղազարոս Աղայանցին 300 ռուբլի, Շերվանզադէին՝ 300 ռուբլի, և Յովհաննէս Թումանեանցին՝ 240 ռուբլի»։ Կատարելապէս համակրելով «Մարդասիրական ընկերութեան» խորհրդի ցանկութեանը՝ նպաստել մտաւոր գործողներին, մենք չենք կարող մատանիչ չանել այն թեթև վերաբերմունքին, եթէ աւելի չասենք, որով խորհուրդը վերաբերվել է այդ ցանկութեան իրագործման։ Մենք, օրինակ, միանգամայն չենք համակրում այնպիսի գրողների ուղղութեան, ինչպէս են Պերճ Պռոշեանց, Ալէքսանդր Երիցեան, և նոյն իսկ յայտնի է, որ նրանք «Մշակի» երդվեալ թշնամիներ են, բայց և այնպէս տարրական արդարութիւնը պահանջում էր Ղազարոս Աղայեանցի հետ միասին օգնել այդ ծերացած, ընտանիքով բեռնաւորված, վաստակած գրողներին, քան թէ օրինակ, այն երկու երիտասարդներին, որոնց ընկերութիւնը նպաստ է նշանակել, որոնք դեռ աշխատելու ընդունակ են, և բացի դրանից,

ինչպէս մեր բոլոր երիտասարդ գրողները, այնպէս և նրանք, բարոյական աւելի պակաս իրաւունք ունեն հասարակական օգնութեան վրա, քան երկար տարիների աշխատաւորները: Մեն իրաւունք ունէինք Բագուի ընկերութեան խորհրդից աւելի լրջութիւն սպասելու:

—

Մարտի 17-ին Թիֆլիսում վախճանվեց նախկին «Վարժարան» մանկավարժական ամսագրի խմբագիր—հրատարակիչ Նիկողայոս Խոսրովեանց: Հանգուցեալը, 80-ական թվականներին մի քանի տարի իրան նուիրեց դպրոցական գործունէութեան, նախ իբրև Գայեանեան օր. դպրոցի տեսուչ, և ապա դնաց Էջմիածին, իբրև Գէորգեան ճեմարանի տեսուչ, որտեղ մնաց մի տարի: Գայեանեան դպրոցում եղած ժամանակն էր, որ հանգուցեալը սկսեց հրատարակել «Վարժարան» ամսագիրը, որը, սակայն, աջողութիւն չունեցաւ և շատ չուտով դադարեց: Վերջին տասն տարին Ն. Խոսրովեան միանգամայն հեռացած դպրոցական և հասարակական գործունէութիւնից՝ վարում էր մասնաւոր պաշտօններ: Նա մասնագիտութեամբ իրաւաբան էր:

—

Մարտի 10-ին, Բագուի նահանգական դատարանում քննվեց մի քրէական գործ, որով Եղիշէ քահանայ Գեղամեան մեղադրվում էր անչափահաս Մայիս Ղահրամանեանցի պակաղութիւնը կատարելու համար: Դատարանում յայտնի դարձաւ, որ քահանայ Գեղամեան այդ յանցանքը կատարել է սխալմամբ, չունենալով չահագրգռական նպատակներ: Ուստի պրոկուրորը հրաժարվեց իր նախկին մեղադրանքից և յայտնելով, որ յանցանքը այն ձևով, ինչպէս հաստատվեց դատավարութեան միջոցին, վերաբերում է այն յանցանքներին, որոնք ներված են Բարձրագոյն մանիֆէստներով, ինքն բոլորովին հրաժարվեց Գեղամեանին մեղադրելուց: Չը նայած որ այսպիսով գործը վերջացած էր, մեղադրվողի պաշտպան Վ. Օնսօվիչ հարկաւոր համարեց դատարանում բէկլամային ձև ունեցող մի առգին ներբող կարդալ իր կլիենտի հասցէին, հասցնելով իր ոգեորութիւնը այն աստիճանին, որ նոյն իսկ յայտնեց թէ Գեղամեան սխալ է գործել, ընդունելով հոգևոր կոչումն... Եթէ փաստաբան Վ. Օնսօվիչ իմանար թէ իր կլիենտը, որ այժմ այդպիսի թելադրութիւններ է անում, մի ժամանակ եղել է հայոց գրականութեան մէջ գործիչ և բաւական տխուր հուշակ է ստացել այն հայհոյանքներով, որոնք թափվում էին «Մեղուի» էջերից հոգևորականութեան մասին ծպուտ անգամ հանողների դէմ, եթէ, ասում ենք, իմանար այդ անցեալը, այն ժամանակ ինչ զոհացում կը տար նա փաստաբանական էթիկային...

—

«Մշակի» № 31-ի մէջ, «Գաղթականների օգտին» եղած նուիրատուութիւնների ցուցակում մի սխալ է մտել. տպագրված է Գէորգ Տէր-Յովսէփեան, բայց պէտք է լինի Գէորգ Տէր-Ոսկանեան, որ իր ներկայացրած 29 ռուբլին հանդանակել է Թիֆլիսի Միջին-Փողոցի «բրիլեանտչիկների» շրջանում:

—

Երկաթուղիների գլխաւոր վարչութեան կից կազմակերպվել է՝ այդ վարչութեան նախկին նախագահ Վասիլիեվի յիշատակը յաւերժացնելու համար՝ մի յանձնաժողով: Յանձնաժողովի նախագահը այս օրերս զիմելով երկաթուղիների տեղական վարչութիւններին, ի թիւս որոց և Անդրովկասեան երկաթուղու վարչութեան բոլոր մասերի գլխաւորներին՝ խնդրում է առաջարկել իրանց ստորադրեալ ծառայողներին՝ մասնակցել այդ գործին նուէրներով: Յանձնաժողովը որոշել է Վասիլիեվի յիշատակ յաւերժացնելու համար՝ 1) Պետրոս և Պօղոս առաքեալների պատկերը կախել այնտեղ, ուր Վասիլիեվ՝ Աւետիս Զախարովից գնդակահար լինելով ընկաւ, և այդ պատկերի առաջ կանթեղը միշտ վառ պահել. 2) Վասիլիեվի պատկերը կախել գլխաւոր վարչութեան դահլիճում և 3) հանգուցեալի անունով թոշակներ սահմանել՝ երկաթուղիների չքաւոր ծառայողների որդոց կրթութեան համար: Յանձնաժողովը, ինչպէս երևում է, յոյս ունի այդ գործի համար առատ նուիրաբերութիւններ ստանալ, որովհետև որոշել է ցանկացողների համար նուիրաբերութեան վճարումը 12 ամսվան վրա բաժանել:

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Այսօր, մարտի 16-ին կայացաւ հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղի ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսիսեանի: Նախ քարտուղար պ. Մելիք-Շահնազարեան կարդաց անցեալ ժողովի արձանագրութիւնը և ապա սկսվեց պաշտօնական անձանց ընտրութիւնը: Ընտրվեցին վարչութեան անդամներ. Միրզա Տէր-Սարգսեան, Մովսէս Շահնազարեան, և Բագրատ Տէր-Սահակեան. փոխ-անդամներ՝ Մովսէս-բէկ Իզբաշեանց, Նիկողայոս Զուրաբեանց: Վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ Իշխան Զուրաբեանց (ուսուցիչ), Պողոս Հասան-Զալալեանց, Մովսէս բէկ Իզբաշեանց: Ընտրութիւնները աջող կարելի է համարել: Անցեալ 1896 թվի հաշիւների քննութիւնը և հաստատութիւնը յետաձգվեց ժամանակը ուշ լինելու պատճառով, եկող կիրակի: Ժողովին ներկայ էին 35 անդամ»:

—

ՆՈՒԽՈՒՑ, Բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տալ հետևեալը. «Բարեգործական ընկերութեան Նուխու տեղական վարչութիւնս սրանով պատիւ ունի յայտնել իր խորին շնորհակալութիւնը պ. Եփրեմ Ծատուրեանցին, որը բարեհաճել է նուիրել մի օրինակ «Հանդէս Ամսօրեայ» ընթերցարանիս, և պ. Մակար Զմշկեանցին՝ իր կազմած երեք օրացոյցներից մի-մի օրինակ ընկերութեանս նուիրելու համար»:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Թիւրքիայից յոյն ժողովրդի գաղթականութիւնը շարունակվում է: Այսօր, մարտի 13-ին, աւստրիական «Նելիօս» շոգենաւով նորից եկան մօտ 100 ընտանիք, մօտաւորապէս 250 հոգի: Սա արդէն երրորդ շոգենաւն է, որով յոյն գաղթականներ եկել են դէպի մեր քաղաքը, մօտ 260 ընտանիք, այլ խօսքով մօտաւորապէս 650 հոգի, որոնք մեծ մասամբ ցրվում են դէպի Սուխումի կողմերը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մի քանի ժամանակ առաջ հեռագիրը հաղորդեց, որ Թօքատում խռովութիւններ են ծագել. մի քիչ յետոյ յայտնվեց, որ 100 հայ են սպանվել, ապա դուրս եկաւ բանից, որ կոտորված հայերի թիւը 700 է, վերջապէս այսօր հեռագիրը յայտնում է, որ այդ թիւը 400 է և կոտորածը Թօքատում չարունակվել է ամբողջ 36 ժամ: Հետաքրքրականն այն է, որ Բ. Դուռը իր սովորութեան համաձայն, սկզբում յայտնեց դեսպաններին, թէ ընդամենը սպանված են Թօքատում 15 հայ և 3 թիւրք և թէ առհասարակ այդ քաղաքում տեղի ունեցած դէպքերը չատ չափազանցված են: Սակայն եւրօպական լրագիրների թղթակիցները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում Թօքատի կոտորածների մասին: Թիւրքերը յարձակվեցին հայերի վրա, երբ նրանք եկեղեցումն էին: Թիւրքաց տեղեկութիւններին նայելով սպանված են, 15 քրիստոնեայ և մուսուլման: Քրիստոնեաներին կոտորելու լուրերը վաղուց պատում էին: Դեսպանները այդ առիթով լուրջ առաջադրութիւններ արին Բ. Դրան և պահանջեցին պատժել յանցաւորներին: Անգլիական հիւպատոսը լուր է ուղարկել, որ Թօքատում սպանվել են 102 հայ, 12 թիւրք և այրվել են 86 տներ և թէ կոտորածներ տեղի են ունեցել նաև Հայաստանի ուրիշ տեղերում:

—

Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պոլսից ստացած տեղեկութիւններին նայելով, մարտի 8-ին Պերա թաղով գնում էին ձիով 5 ռուս և 2 աւստրիացի օֆիցէրներ, որոնք ծառայում են Կ. Պոլսի ջրերում կանգնած պահակաւորում: Այն ժամանակ, երբ նրանք անցնում էին «Թոփխանէ» կոչված քաղաքամասով, նրանց վրա յարձակվեց թիւրք խառնիճաղանճ ամբոխը և սկսեց ծեծել: Միայն մեծ դժուարութեամբ, այն էլ ծանր վէրքեր ստանալուց յետոյ, նրանք կարողացան փախչել: Այն ժամանակ, երբ ամբոխը կատարում էր իր գազանութիւնը, ներկայ եղող մահմեդականներից չատերը, նրանց թուում և կանայք, զոռում էին «սպանեցէք դրանց»: Այդտեղ կանգնած էին և ոստիկանութեան պաշտօնեաները, բայց չէին միջամտում: Ռուսաց դեսպան Նելիդով պահանջեց խիստ քննութիւն կատարել:

—

Դամասկոսից հեռագրում են «Standard» լրագրին մարտի 8-ից. «Թիւրքաց զօրքերի մէջ տիրող անկարգութիւնը դժուար կարելի է նկարագրել: Ահա ինն ամիս է՝ ոչ մի ռոճիկ չեն ստացել, և ծառայողներից չատերը զուրս են բերել վաճառելու իրանց զէնքերը և զգեստները՝ հացդնելու համար»:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ մարտի 2/14-ին

Փետրվարի 28-ին, ուրբաթ օրը կէս օրից յետոյ, Թաւրիզի Լիլաւա թաղի թատրոնական սրբատեղի ունեցաւ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ժողովը, որին ներկայ կարող էր գտնվել ամեն մի թաւրիզեցի հայ տիկին, բայց չատ ցաւալի է, որ չատ քչերն էին հետաքրքրվել այդ ժողովով: Ժողովին ներկայ էր ընկերութեան անդամների մի մասը, մօտ քսան և հինգ հոգի: Ժողովը բաց արեց տիկին Ի. Յակովբեանը, որը մանրամասն հաշիւ տուեց վարչութեան մինչև այժմ ունեցած գործունէութեան մասին: Ապա տիկին Ս. Ամատունեան, որը տիկին Մ. Մասումեանի հետ Սալմաստ էր գնացել գաղթականներին օգնելու, բաւական վառ կերպով նկարագրեց այնտեղի գաղթականների վիճակը, այնպէս որ հանդիսականներից ոմանք այնքան զգացվեցան, որ սկսեցին արտասվել: Տիկինը իր նկարագրութիւնը հետևեալ խօսքերով վերջացրեց. «Մի խօսքով մեր տարած մօտ հազար ձեռք հագուստը և այն դրամը, որով մենք ցորեն գնեցինք և բաժանեցինք նրանց, մի կաթիլ ջուր էր օգնութեան ովկիանոսի մէջ: Ուստի խնդրում եմ ներկայ եղող յարգելի տիկիններից, որ իւրաքանչիւրն իր կարողութեան չափով մի քան նուիրէ այդ խեղճ, հագուստից և մնունդից զուրկ գաղթականներին»: Վերջացնելով իր խօսքերը, նա նուիրեց յօգուտ կարօտեալների իր հանգուցեալ աղջկայ զարդերը (մի կրծքի քորոց, մի ապարանջան և մի զոյգ օղեր): Ներկայ եղող տիկինները խրախուսվելով տիկնոջ օրինակից, իւրաքանչիւրը նուիրեց գաղթականներին մի որ և է զարդ կամ այնքան փող, որքան որ իր կարողութիւնը թոյլ էր տալիս: Բացի զարդերից, հաւաքվեց 52 թուման (մօտ 100 ռուբլի) փող, այնպէս, որ երբ ընկերութեան որոշման համաձայն զարդերն ևս վիճակախաղի դրվեն, այն ժամանակ վերոյիշեալ տիկինների նուիրատուութիւնների գումարը կը լինի մօտ 200 ռուբլի, որի վրա կաւելացնեն և այն ներկայացումից դուրս եկած գումարը, որ պիտի ընկերութիւնը տայ յօգուտ Սալմաստի գաղթականների: Զարմանալի է պարսկահայ տիկինների այս համակրելի գործունէութիւնը, որը, յուսով ենք, գնալով, աւելի ընդարձակ ծաւալ կը ստանայ:

Ա. Ն.

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՑԻՑ

—

Ռուսճուք, մարտի 10/22-ին

Բաւական ժամանակէ ի վեր՝ իգական սեռի ընթերցարան յաճախելու խնդիրը երևան եկած էր, սակայն զանազան պատճառներով յետաձգված էր: Վերջապէս անցեալ տարի վարչութիւնը, նկատողութեան առնելով այդ խնդիրը՝ դէթ չաթթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, որոշած էր յատկացնել ընթերցարանը իգական սեռի համար, այսինքն չորեքշաբթի օրերը ընթերցարանը իգական սեռի տարամաղութեան տակ պիտի մնար մինչև ժամը 5-ը: Սակայն ցաւալի է ասել թէ՝ մինչև օրս ամեն անգամ իրարու վրա դէթ 10 այցելուհիներ չունեցանք, հակառակ վարչութեան հրապարակ հանած հրաւիրագրերու ու թախանձագին զիմումներու: Իրօք, չատ ցաւալի է, որ մեր տեղացի կանայք ու օրիորդք տակաւին չեն կարողացած ըմբռնել ուսման կամ ընթերցանութեան կարևորութիւնը ու օգտակարութիւնը: Վարչութիւնը ամեն զոհողութիւններ յանձն առած է, որպէս զի իգական սեռն ևս օգտվի ընթերցարանէ, իսկ դրանք նոյն իսկ ընթերցարանի մօտենալ չեն ուզեր: Մասնաւորելով մեր խօսքը վերջերս Պոլսէն գաղթած տիկնանց ու օրիորդաց վրա, կը ցանկանայինք, որ գոնէ զբրանք, մի բիչ զարգացեալ ու նախապաշարմունքներէ զուրկ ըլլալով՝ համոզեն իրենց տեղացի բարեկամուհիները, որպէս զի ընթերցարան յաճախեն: Այսպիսով թերևս պատճառ կըլլան բարի գործի մը:

Գաղթականներու հետ Պոլսէն եկող վարդապետներէ միոյն համար լուր մը տարածված է քաղաքիս մէջ, իբր թէ Կաթողիկոսի կողմանէ քարոզիչ կարգուած է Ամերիկայի համար: Այս լուրի ստուգութեանը չենք կրնար ապահովել, սակայն եթէ ճիշդ է, մենք բոլորովին անյարմար կը նկատենք այդ՝ ինչ ինչ պատճառներով:

Ց. Գէորգեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքաց նաւատորմը

Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքաց առաջին նաւատորմի կրեսէ գնալու ժամանակ ափերը և կամուրջները լցված էին հանդիսատես բազմութեամբ, որի մէջ կային չատ կանայք: «Մեջիդիէ» նաւը նաւագածութեան և ողջոյնների ձայների ուղեկցութեամբ ծանր կերպով գնաց դէպի կամուրջի բացված մասը, բայց երկրորդ նաւ «Համիդիէն» դանդաղեցրեց իր ընթացքը, ծռվեց և փոխանակ որ գնայ դէպի կամուրջը, ուղիղ գնաց ժողովրդի վրա: Թէև երկու չոգենաւեր ժամանակին յետ քաշեցին նրան և տարան իր տեղը, սակայն ժողովրդի մէջ սարսափ և իրարանցում տեղի ունեցաւ, և չատերը թափվեցան գետնի վրա: Ղալաթայում վաճառականները, տեսնելով վազվզոցը, չատպեցին փակել խանութները, կարծելով թէ կոտորած է: Սարսափը տարածվեց և Պերայում: Վերջապէս հանգստութիւնը վերականգնվեց:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Մարտի 16-ին, «Надежда» ընկերութեան 50-ամեայ գործունէութեան առիթով, Կազանի տաճարում գոհացողական մաղթանք կատարվեց: Ապա տեղի ունեցաւ ճաշ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ կրկին թոյլ տալ «Гражданинъ»: «Свѣтъ» և «Гласность» լրագիրների հատուկ ծախելը:

ԲԵՐԼԻՆ, 18 մարտի: Տպված է պրոֆէսոր Կոխի հաղորդագրութիւնը տուբերկուլինի նոր պրէպարատների մասին: Բժշկութեան չատ դէպքեր, ընդհանրացած տեսակէտով, կարելի կը լինէր բժշկութիւն համարել, բայց գործ դնել «բժշկվել» խօսքը վաղաժամ է համարում, մինչև որ չանցնի բաւական ժամանակ, առանց հիւանդութեան կրկնութեան: Նոր պրէպարատով կատարվում են սրսկումներ կաշուի տակ: Մի-ջոցը արդէն գործ է դրվում:

ՊԱՐԻԶ, 18 մարտի: Պատգամաւորների ժողով: Ներկայ են բազմաթիւ պատգամաւորներ և մեծ կենդանութիւն է նկատվում: Ժիւլէն և Կովիա Լոգ, որոնց անունները յիշված էին լրագիրներում, սաստիկ բողոքում են ամբաստանութիւնների դէմ և պահանջում են. որ պատգամաւորների ժողովը վերցնի իրանցից պարլամենտական անձեռնմխելիութիւնը և դրանով պաշտպանվելու միջոց տայ իրանց: Սալիս և Գուդրան նոյնպէս ջերմ կերպով բողոքում են իրանց վրա բարդած մեղադրանքների դէմ: Բուվիէ պահանջում է, որ իրանից առնեն պարլամենտական անձեռնմխելիութիւնը, և բողոքում է մեղադրանքի դէմ: Մինիստրն ասում է, որ իրաւունք չունի պահանջել պարլամենտական անձեռնմխելիութեան ոչնչացումը՝ համաձայն նախկին հեռատօրների ցանկութեան: Այդ բանի մասին պէտք է տեղեկացնել ընդհանուր պրոկուրորին: Մինիստրը առաջարկում է ընդհատել նիստը, որպէս զի ինքն կարողանայ խորհրդակցել ընդհանուր պրոկուրորի հետ: Պատգամաւորների ժողովը որոշում է ընդհատել նիստը:

ԼՕՆԴՕՆ, 18 մարտի: Համայնքների ժողով: Կէրզօն հաղորդում է, որ թիւրքաց զօրաբաժինը Մալակա բլոկհաուզում, Կանէյից $1\frac{1}{2}$ մղոն հեռաւորութեան վրա, կատարելապէս զուրկ է կենսական մթերքներից: Ապատամբները չեն թոյլ տալիս, որ պաշար հասցնվի նրան: Երեք թիւրքեր, որոնք պաշար էին հասցնում, ապանվեցին եւրօպական նաւերի աչքի առջև: Ծովապետները դրանից յետոյ ապստամբների առաջնորդին ուլտիմատում ուղարկեցին, որի մէջ ասված է, որ նրանք պարտաւոր են թոյլ տալ պաշարի հասցնելը,—հակառակ դէպքում այժ կը գործ դրվի: Մարտի 13-ին ծովապետը հեռագրեց, որ ապըստամբները, չը նայելով ծովապետների պահանջին, չը թոյլ տուեցին պաշար մացնել բլոկհաուզ: Թիւրքաց պատերազմական նաւը թնդանօթներ է արձակում՝ նրանց արտաքսելու համար: Եթէ այդ նպատակը չիրագործվի,—ռմբակոծութիւն կը սկսեն պետութիւնների նաւերը: Ծովապետները այդ քայլը միաձայն անհրաժեշտ են համարում բլոկհաուզը ազատելու համար: Թնդանօթաձգութիւնը, որի նշանը տուեց իտալական

ծովապետը, վեց բոպէ տևեց։ Երբ նա դադարեց, երևաց, որ ապստամբները կողոպտել և հրդեհել են բլօկհաուզը։ Մարտի 14-ին ծովապետը հաղորդեց, որ թիւրքերը հեռացան բլօկհաուզից, որը գրաւեց երկու թնդանօթների օգնութեամբ, որոնք պատկանում էին յոյներին։ Զրի ընթացքը դէպի բլօկհաուզ ընդհատված է։ Բլօկհաուզի գրաւումը ուղղակի անուշադրութիւն էր դէպի ծովապետների նախազգուշութիւնը, որ արված էր ապստամբներին անդլիական հիւպատոսի միջոցով։ Ծովապետները որոշեցին, նաւերից կրակ թափելով, չը թոյլ տալ ապստամբներին շարունակել իրանց փորձը, որովհետև նրանց գրաւած դիրքը տիրապետում է դէպի Սուդի զօրանոցը տանող ճանապարհի վրա։ Մարտի 15-ին ծովապետը հեռագրեց, թէ որովհետև ապստամբները շարունակում են իրանց յարձակումները, և մի և նոյն ժամանակ նրանց թնդանօթները գանվում են Կանէյի վրա տիրապետող կէտի վրա,—ծովապետները որոշեցին ապստամբների հետ վարվել որպէս թշնամիների հետ և պահանջել անյապաղ օգնական զօրք ուղարկել իրանց, որպէս զի քաղաքի պաշտպանութիւնը աւելի իրական լինի։ Ապստամբների ապագայ շարժումը պէտք է վերջ դնվի։ Կանէյում մեծ անհանգստութիւն է տիրում։ Այնտեղ թաքնված աղգաբնակութիւնը սպառնում են սով և հիւանդութիւններ։ Նոյն օրն և եթ ծովապետը հաղորդեց, որ իր ստացած տեղեկութիւնների ամեմատ, ծովապետների կողմից վաստնախազգուշութիւն էր ստացել, բայց նա պատասխանեց նրանով, որ հրամայեց գրաւել բլօկհաուզը։ Մարտի 16-ին ծովապետից հաղորդագրութիւն ստացվեց, թէ ապստամբները, տեսնելով բլօկհաուզի վրա իրանց տարած յաղթութիւնը, սկսեցին պաշարել այն ամրութիւնը, որ գրաւած ունեն թիւրքերը, Սուդի հրաւանդանի ետև։ Դրութիւնը կրճատում այնպէս է, որ կարծես թէ վաստնակնյայնի պատերազմ է հրատարակել մեծ պետութիւններին։

ԼՕՆԴՕՆ, 19 մարտի։ «Times» լրագրին հաղորդում են Սալոնիկից. «Օրէցօր դրութիւնը դառնում է աւելի կրիտիկական։ Այժմ վլասանի շուրջը հաւաքված է 50 000 մարդ, և 300 կրուպի թնդանօթ։ Երկիղ են կրում, որ յունաց կանոնաւոր զօրքը յարձակումներ կը գործեն սահմանի վրա»։

Կ. ՊՕԼԻՍ, 19 մարտի։ Սկիւտարում անկարգութիւնների ժամանակ սպանվեցին երկու կաթոլիկ. երկուսն էլ վիրաւորված են։ Հիւպատոսները դիմեցին վալիին՝ առաջարկելով թոյլ չը տալ մահմեդականներին խուժելու հիւպատոսարանների մէջ, քանի որ այդ վտանգը գոյութիւն ունի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Մարտի 20-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	93	ր. 90 կ
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»92½»
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	»32½»
Ոսկի — — արժէ . .	—	» — »
Մաքսային կուպօններ — . .	149	» — »
Բօրսային դիսկօնտ — . .	5½	—7% »
4% պետական բէնտա	99⅛	» — »
Ներքին 5% առաջին փոխառութ.	274½	» — »
— — երկրորդ —	244	» — »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	210½	—
5% պետական երկաթուղ. բէնտա	—	— »
4% ներքին փոխառութեան	93¾	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅝	— »
Ազն. կալ. Գետ. բանկի խաղարկութ.	—	» —
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	101⅜	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ.	—	» —
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101½	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101¼	» — »
Օդեսայի — —	100	» — »
Թիֆլիսի — —	98¾	» —
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	102	» —
5% — — — . .	99⅜	» — »
Բուխարայի — — . .	102	» — »
5% — — — . .	99⅛	» — »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ. Ա. Նարիեանց. «Մշակը» մարտ ամսից արժէ 9 բուբլի. բարեհաճեցէք ուղարկել մնացածը։

ՊԵՏՐՕՎՍԿ. Ա. քահ. Մարգարեանց. Կարդացէք նախընթաց պատասխանը։

ՏԱՆԶՈՏ. (Արդանուշի գաւ.) Ա. Նարիջանեան. Կարդացէք վերևի պատասխանը։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Խ. Ալէքսանդրեանց. Կարդացէք վերևի պատասխանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ
ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. դուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցերե.
Թիֆլ. դուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաքու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.

Բաքուից դուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցերե.	11 ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. դուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հինգ հազար համար

Թիֆլիսից դուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է	Մլեռում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Վեց հազար համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից դուրս է գալ	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 50 ր.
Վլադիկավկազ հասնում է	12 „ —ցերեկ.	8 երեկ „„„

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւններ։

Գ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ են անում մզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
„ROBERT COLLEGE“

ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՒԱՐՏԸ ուսուցանում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ամերիկական նոր սիստեմով. դասաւանդութիւնը ռուսերէն կամ ֆրանսերէն լեզուով։ Պայմանների մասին հարցնել Թիֆլիսի Ազնվականութեան քարվանսարայում, № 127 դրասենեակում։ (№ 22) 6—6

ՎԱՐԺՈՒՀԻ

Կամենում է դասեր ունենալ ռուսերէն, ֆրանսերէն և մուղիկա, եօթից մինչև տասը տարեկան աղջկերանց հետ։ Պարապում է ժամերով։ Համաձայն է ընդունել և իր տանը։—Հասցէն՝ Барятинская улица, № 10։
(№ 26) 6—6

Կ. ՊՕԼՍԵՅԻ

ԱՆԱԳՈՐԾ (կլեկշի) և ՊԱՆՇԱԳՈՐԾ յայտարարում են, որ ընդունում են պատուէրներ էժան գնով, երաշխաւոր են շինածի ամրութեան և տեսողական լինելու համար։ Դիմել 5-րդ քաղաքամաս, Ցիցիանովի փողոց, տուն Խօջայանցի, № 4։
2—3

Ի ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ

Ը-շանակեալ է ամուրդ ի 26 այսր մարտի առանց կրկնամուրդի վասն տալոյ ի վարձու զկալուածս Ս. Էջմիածնի՝ որ ի Տըփխիս, 1, տուն, որ ի փուան թաղի (5-րդ քաղաքամաս), 2, երեք կրպակք հանդերձ նկուղիւ մերձ կաթուղիկէ եկեղեցւոյ, և 3, մի երկյարկանի տուն, որ ի Սիմէօնեան փողոցի։ Ամուրդն սկսանի յ12-րդ ժամու աւուր, ուստի ցանկացողք կարեն ներկայ գտանիլ ի նշանակեալ պահուն հանդերձ գրաւականօք։

Անդամ կոնսիստորիայի՝
Համազասպ վարդապետ
(№ 32) 2—3

Պատրաստ են ներկայացնելու համար Ալ. Մուրադբեկեանի թարգմանած հետևեալ դրամները.

ԿԵԱՆՔ—Պատանեկօյի։

ԱՆՊԱՏԻՒ ԶԵՆ ԾՆՎՈՒՄ—Բօվիատիի։

ԳԻՒՂԱԿԱՆ ՊԱՏԻՒ—Վերդիի։

2—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

վարչութիւն յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, մարտի 22-ին, շաբաթ, երեկոյեան 7½-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

որի պարապմունքի առարկաներն են. 1) 1896 թ-ի տեղեկագրի, հաշուի և 1897 թ-ի նախահաշուի ընթերցումը և հաստատումը. 2) հեղինակների վարձատրութեան և գրական մրցանակաբաշխութեան մասին զեկուցում. 3) պաշտօնատար անձերի ընտրութիւնը՝ վարչութեան նախագահի, փոխնախագահի, մի անդամի և գրագրի և խմբագրական մանուաժողովի երեք անդամի։ Վարչութիւնը հարկ է համարում յայտարարել, որ վարչութեան վերջին նիստը նշանակված է մարտի 22-ին, շաբաթ օր, ցերեկվայ ժամը 2-ին և մինչև այդ նիստը կը լինի այն նոր անդամների ընտրելու թիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին։ Ընկերութեան 1896 թ-ի տեղեկագիրը ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը սկսած ամսիս 19-ից։
2—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մանելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, ապրիլ ամսի 2/14-ին ԱՐՍԷՆԻ չոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԴՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կուլիբակինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելիքիոր Հերչինբօղերին։ (№ 16) 18—20

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաները, կադետների կօրպուսի, զեմլէմերների, ըէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Առանձին առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինականայուսնաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր) բնական գիտութիւն նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։

Հասցէն. ТИФЛИСЪ. Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մօտ։
(№ 102) հ.) 5—10

ՕՎՍԱՆԻԱՆ ՄԻՋՈՑԵՐ
ԲԷՐԹԱ-ՐԻՍ

Բիմիա կօսմետիկական լաբորատորիա ՐԻՍ ԴՈՒՏՄԱՆ

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА ПРИВИЛЕГИРОВ. ПОМАДЫ. ЛИЧНАЯ ПОМАДА. PASTA EUGENIE. Berthae Ries

ԷՕԺԻՆԻԱՅԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերումնաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մաղերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԻՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և Բաչել (թոփա դէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկասելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԻՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ սյտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդագոյն գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արեհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ

գլխի պօմադ Պերուանական բալզամով եփած՝ մաղերը սընդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԵՈՒՆԶԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա ծերծածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Ռիս-Դուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ռիս-Դուտման), սև, չադանակագոյն և խարտեաչ։ Այդ ներկով ներկված մաղերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բաքու։
(№ 26) 25—50

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Марта 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 2а.